

Ապաստանի երկարացված ընթացակարգը

Ինչո՞ւ եք դուք ստանում այս բրոշյուրը

Դուք ապաստան եք խնդրել Նիդերլանդներում: Միգրացիայի և հպատակագրման ծառայությունը (IND) քննարկում է, թե արդյոք դուք բավարարում եք փախստականի կացության կարգավիճակի իրավունքի պահանջները: Ապաստանի ընդհանուր ընթացակարգը տևում է ութ օր: Ձեր պարագայում IND-ն ավելի շատ ժամանակի կարիք ունի քննությունն անցկացնելու համար: Այդ պատճառով IND-ն ձեր ներկայացրած ապաստանի հայցի հետագա քննություն կանցկացնի ապաստանի երկարացված ընթացակարգի միջոցով: Այս բրոշյուրում դուք կկարդաք, թե ինչ է տեղի ունենում ապաստանի երկարացված ընթացակարգի ժամանակ:

Ապաստանի ընթացակարգը

Դուք արդեն գրույցներ եք ունեցել IND-ի հետ ձեր անձնական տվյալների վերաբերյալ և թե ինչ ճանապարհով եք եկել Նիդերլանդներ: Հավանաբար ձեր երկրորդ հարցազրույցը IND-ի հետ ձեր երկրից մեկնելու պատճառի վերաբերյալ նույնպես արդեն կայացվել է: Եթե IND-ն ձեզ այլևս հարցեր չունի տալու, ապա դուք կարիք չունեք ապաստանի երկարացված ընթացակարգի ժամանակ գալ IND-ի գրասենյակ: Եթե IND-ի հետ դուք դեռ երկրորդ գրույցը չի կայացրել կամ IND-ն դեռ ցանկանում է ձեզ հարցեր տալ, ապա նրանք ձեզ հետ կապ կհաստատեն լրացուցիչ հարցազրույցի համար: Ապաստանի երկարացված ընթացակարգի ժամանակ նույնպես դուք կստանաք փաստաբանի անվճար օգնություն: Դուք կարող եք ձեր ներկայացրած ապաստանի դիմումի քննարկման պատասխանին սպասել Նիդերլանդներում: Այս ժամանակահատվածում դուք կբնակվեք Փախստականների ընդունելության կենտրոնական մարմնի (COA) կողմից հատկացվող ընդունելության կացարաններից մեկում: Ապաստանի գործընթացի երկարացման դեպքում հնարավոր է, որ դուք տեղափոխվեք ապաստանի մեկ ուրիշ կենտրոն: Եթե ցանկանաք անցնել Ապաստանի Երկարացված Գործընթացին, ապա այդ դեպքում հնարավոր է, որ տեղափոխվեք ապաստանի մեկ ուրիշ կենտրոն:

Նախնական որոշում

Վեց ամսվա ընթացքում դուք նամակ կստանաք IND-ի կողմից կատարված հարցազրույցի արդյունքի մասին: Կան երկու հնարավոր հիմնավորումներ.

1. Դուք բավարարում եք փախստականի բնակության կարգավիճակի իրավունքի պահանջները: Դուք IND-ից (ձեր փաստաբանի միջոցով) կստանաք մի նամակ (վճիռ), որտեղ գրված է, որ ձեր ներկայացրած ապաստանի դիմումի հիմքերը բավարար են, թե ոչ:
Դուք կունենաք իրավունք Նիդերլանդներում (ժամանակավորապես) բնակության համար: Ձեր փաստաբանը կբացատրի նաև դրա հետևանքների մասին:
2. IND-ն եզրակացնում է, որ դուք չեք բավարարում փախստականի բնակության իրավունքի պահանջները: IND-ի նամակում գրվում է, որ IND-ն պատրաստվում է (այսինքն՝ մտադիր է) մերժել ձեր ներկայացրած ապաստանի դիմումը: Այն անվանում են նամակ՝ նախնական որոշման պատասխանի վերաբերյալ, որում նաև նշվում է մերժման պատճառների և դրա հետևանքների մասին: Ձեր փաստաբանը ձեր հետ միասին կքննարկի այդ նամակը:

Կարծիք

Եթե IND-ն որոշել է (այսինքն՝ մտադիր է) մերժել ձեր ապաստանի հայցը, ապա դուք այդ նախնական որոշումը կարող եք քննարկել ձեր փաստաբանի հետ: Ձեր փաստաբանն այնուհետև գրավոր արձագանք (կարծիք) կուղարկի IND-ին: Դա մի նամակ է, որով դուք կարող եք պաշտոնապես արձագանքել IND-ի նախնական որոշմանը և հայտնել, թե դուք ինչու համամիտ չեք այդ նախնական որոշմանը:

Որոշում

IND-ն կարդալուց հետո տալիս է իր պատասխանն այն մասին մասին թե արդյոք տված նախնական կարծիքը պետք է փոփոխի, թե ոչ: Այս քննության արդյունքը կրկին որոշիչ է, թե ինչպիսի հետագա ընթացք կունենա ձեր ապաստանի դիմումը: IND-ն այս քննարկման արդյունքը նամակի տեսքով կհայտնի ձեր փաստաբանին: Ձեր փաստաբանը կբացատրի, թե այն ինչ հետևանքներ կունենա:

Կա երկու հնարավորություն.

1. Ձեր կարծիքը կարդալուց հետո IND-ն ասել, որ, անկախ ամեն ինչից, դուք բավարարում եք փախստականի կացության կարգավիճակի իրավունքի պահանջները: Դուք IND-ից, (ձեր փաստաբանի միջոցով) կստանաք մի նամակ (վճիռ), որում գրվում է, որ ձեր ներկայացրած ապաստանի դիմումն ունի բավարար հիմքեր: Դուք իրավունք կունենաք (ժամանակավորապես) բնակվելու Նիդերլանդներում: Ձեր փաստաբանը կբացատրի, թե այն ձեզ համար ինչ հետևանքներ ունի:
2. IND-ն գտնում է, որ դուք չեք բավարարում փախստականի բնակության կարգավիճակ ստանալու իրավունքի պահանջները: Դուք IND-ից (ձեր փաստաբանի միջոցով) կարող է ստանաք մի նամակ (վճիռ), որում գրվում է, որ ձեր ներկայացրած ապաստանի դիմումը մերժվել է: Այդ նամակի հետ միասին տրվում է նաև մի առանձին տեղեկատվություն մերժման հետևանքների մասին, այն մասին, թե դուք ինչ կարող եք անել կայացված մերժման դեմ, որում նշված է նաև վերադարձի հնարավորությունների մասին: Այդ որոշման մեջ գրվում է նաև մերժման պատճառների և դրա հետևանքների մասին:

Ապաստանի ընթացակարգի ավարտից հետո

Եթե IND-ն ընդունում է ձեր ներկայացրած ապաստանի դիմումը, ապա դուք իրավունք կստանաք (ժամանակավորապես) բնակվելու Նիդերլանդներում: Դուք կստանաք բնակության կարգավիճակ, աշխատելու թույլտվություն և, որոշ դեպքերում, կարող եք Նիդերլանդներ բերել ձեր ընտանիքի անդամներին:

COA-ն նաև միջնորդում է բնակարան փնտրելիս: COA-ի հետ գրույցի ժամանակ գրի կառնվեն կարևոր տեղեկություններ ձեր կացարանային պայմանների վերաբերյալ: Այս տվյալների հիման վրա ձեզ կկցեն Նիդերլանդների որևէ համայնքի, որն էլ ձեզ համար կփնտրի համապատասխան բնակարան: Բնակարանի առաջարկի հնարավորությունը մեկ անգամ է, և դուք պետք է համաձայնվեք այդ առաջարկին: Դուք իրավունք ունեք բնակվել COA-ի ընդունելության կենտրոնում, մինչև բնակարան ստանալը: Ապաստանի դիմումի դրական պատասխանի դեպքում IND-ն կտեղեկացնի ձեր իրավունքների մասին, ինչպես օրինակ ձեր երկրում ապրող ձեր ընտանիքի անդամներին կանչելու և ձեր պարտականությունների վերաբերյալ: Փախստականների աջակցության կենտրոնի (VluchtelingenWerk) աշխատակիցները կարող են ձեզ օգնել Նիդերլանդների հասարակության մեջ ինտեգրվելու և ընտանեկան վերամիավորման ընթացակարգի հետ կապված հարցերում: Նրանք ձեզ նաև կօգնեն տարբեր խնդիրներ լուծելու հարցերում, օրինակ՝ բնակարան, կրթություն ստանալու կամ աշխատանք գտնելու հարցերում:

Եթե IND-ն մերժի ձեր ապաստանի դիմումը, ապա դուք կարող եք ձեր փաստաբանի հետ խորհրդակցել և այդ որոշման դեմ բողոքարկել Նիդերլանդների դատարանին: Դա նշանակում է, որ դուք դատավորին պաշտոնապես կարող եք հայտնել, որ դուք համամիտ չեք IND-ի որոշման հետ: Այդ դեպքում դատավորը կուսումնասիրի, թե արդյոք IND-ն ճիշտ է կիրառել Նիդերլանդների օրենքը ձեր ներկայացրած ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում կայացնելիս, թե ոչ: Որոշ դեպքերում դուք իրավունք ունեք սպասել դատավորի որոշմանը, երբեմն էլ ոչ, բայց այդ դեպքում էլ դուք կարող եք դիմում դատարանին ներկայացնել բողոքարկման ընթացակարգի ժամանակահատվածում Նիդերլանդներում մնալու իրավունք ստանալու համար: Ձեր փաստաբանը կօգնի ձեզ այս հարցով դիմել դատավորին:

Եթե IND-ն մերժում է ձեր ապաստանի դիմումը, ապա դուք, ամենայն հավանականությամբ, կտեղափոխվեք փախստականների մեկ այլ կենտրոն, որտեղ դուք կպատրաստվեք ձեր երկիր վերադառնալու համար: IND-ի որոշման մեջ գրված է, թե որքան ժամանակում պետք է լքեք Նիդերլանդները: Մերժման դեպքում հիմնականում արվում է 28 օր ժամանակ: Այդ ժամկետի ավարտից հետո դուք այլևս որևէ կացարանի և փախստականների կենտրոնում ապրելու իրավունք չեք ունենա:

Դուք ինքներդ եք պատասխանատու ձեր երկիր վերադառնալու համար: Եթե դուք ինքնուրույն չեք մեկնում նշված ժամկետում, ապա հնարավոր է, որ դուք ստիպողաբար արտաքսվեք ձեր երկիր:



Եթե դուք ցանկանում եք կամավոր վերադառնալ ձեր երկիր, ապա կարող եք կապ հաստատել Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ (IOM): IOM-ը կարող է ձեզ տալ գործնական տեղեկություններ և աջակցել ձեր վերադարձի հարցերում: IOM-ն հաճախ ունի ընդունելության ժամեր փախստականների կենտրոնում:



Dienst Terugkeer en Vertrek
Ministerie van Veiligheid en Justitie

Վերադարձի և մեկնման ծառայությունը (DT&V)
Նիդերլանդների Արդարադատության և անվտանգության նախարարության բաժիններից մեկն է: Եթե ձեր ապաստանի դիմումը մերժվի IND-ի կողմից, ապա DT&V-ի աշխատակիցը ձեզ կ օգնի կազմակերպելու վերադարձ դեպի ձեր երկիր:

Ապաստանի ընթացակարգի ավարտից հետո նույնպես դուք կարող եք դիմել Փախստականների աջակցության կենտրոնին աջակցություն և տեղեկատվություն ստանալու համար

Անձնական տվյալների մշակումը

Անձնական տվյալները ձեր անձին վերաբերող բոլոր տեսակի տեղեկություններն են: Ստորև գրված է այս գրքույկով զբաղվող բոլոր կազմակերպությունների անունները: Այդ կազմակերպությունները մշակում են ձեր անձնական տվյալները՝ ապաստանի հայցի, դիմումի կամ որևէ խնդրանքի դեպքում: Նրանք դիմում են ձեզ՝ իմանալու ձեր, ինչպես նաև այլ կազմակերպությունների կամ մարդկանց տվյալների մասին, եթե կա դրա անհրաժեշտությունը: Այս կազմակերպությունները օգտագործում և պահում են ձեր տվյալները և փոխանցում դրանք այլ կազմակերպությունների, եթե դա պահանջվում է ըստ օրենքի: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է ձեր տվյալները մշակող կազմակերպություններին վերաբերող պարտավորությունների մասին: Օրինակ՝ նրանք պետք է ուշադիր և անվտանգ ձևով առնչվեն ձեր անձնական տվյալներին: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է նաև ձեր իրավունքների մասին, օրինակ՝

- կազմակերպություններում թափանցել ձեր տվյալներին վերաբերող հարցերում;
- տեղեկանալ, թե կազմակերպությունները ինչու և ինչ նպատակով են օգտագործում ձեր տվյալները;
- տեղեկանալ, թե նրանք որ կազմակերպություններին են փոխանցել ձեր տվյալները:

Ցանկանում եք ավելի իմանալ ձեր անձնական տվյալների և իրավունքների մասին, ապա կարող եք մուտք գործել այդ կազմակերպությունների կայքերը: Այս գրքույկի ստորին մասում գրված է այդ կայքերի հասցեները:

Հաճախ տրվող հարցեր

Բնչ կլինի, եթե դուք չներկայանաք IND-ի հարցազրույցին:

Հնարավոր է, որ դուք չկարողանաք ներկայանալ IND-ի կողմից նշանակված հանդիպմանը: Այդ դեպքում դուք պետք է ունենաք կարևոր պատճառ: Այդ մասին դուք պետք է ձեր փաստաթղթերի միջոցով տեղեկացնեք IND-ին: Եթե IND-ն գտնի, որ դուք իսկապես ունեք հարգելի պատճառ, ապա կնշանակվի:

նոր հանդիպում: Առանց հիմնավոր պատճառի IND-ի նշանակված հանդիպմանը չներկայանալը կարող է բացասական հետևանք լինի ձեր ապաստանի դիմումի հարցում:

Որքան է տևում IND-ի կողմից գործի քննարկումը

IND-ն պետք է որոշում կայացնի վեց ամսվա ընթացքում՝ ձեր ապաստանի հայցը ներկայացնելուց հետո: IND-ն երբեմն իրավունք ունի երկարաձգել իր որոշման կայացման ժամանակահատվածը՝ լրացուցիչ հարցազրույց անցկացնելու համար: Եթե IND-ն վեց ամսվա ընթացքում որոշում չկարողանա կայացնել, ապա այդ դեպքում նրանք ձեզ այդ մասին կտեղեկացնեն: Եթե IND-ն ձեր ապաստանի դիմումին հաջորդող վեց ամիսների ընթացքում դեռ որոշում չկայացնի և դուք այդ մասին լուր չստանաք, ապա դուք կարող եք նամակով IND-ից պահանջել, որ ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում կայացնեն երկու շաբաթվա ընթացքում: Ձեր փաստաթղթեր օգնել այս հարցում կօգնի ձեզ: Ձեր փաստաթղթերի ներկայացրած դիմումի հիման վրա դատավորը կվճռի արդյոք IND-ն պետք է տույժ վճարի յուրաքանչյուր օրվա համար, թե ոչ՝ ձեր ապաստանի հայցի հետ կապված որոշում չկայացնելու համար:

Բրոշյուրը կարդալուց հետո հարցեր ունե՞ք

Դուք կարող եք ձեր հարցերն ուղղել ձեր փաստաթղթերի կամ COA-ի, IND-ի և Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկին:

Ունե՞ք որևէ բողոք:

Բոլոր կազմակերպությունները, ովքեր ներգրավված են ապաստանի ընթացակարգի գործերում, փորձում են աշխատել պրոֆեսիոնալ և հոգատարությամբ: Մակայն եթե դուք գտնում եք, որ որևէ կազմակերպություն ձեզ ոչ ճիշտ վերաբերմունք է ցուցաբերել, ապա կարող եք ներկայացնել բողոք: Ձեր փաստաթղթեր կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկը կարող է օգնել ձեզ նման հարցում:

Այս տեղեկատվությունը հեռուկալ կազմակերպությունների միասնական հրապարակումն է.

Centraal Orgaan opvang asielzoekers | www.coa.nl
Փախստականների ընդունելության կենտրոնական մարմին
Dienst Terugkeer en Vertrek | www.dienstterugkeerenvertrek.nl
Վերադարձի և մեկնման ծառայություն
Immigratie- en Naturalisatiedienst | www.ind.nl
Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն
Raad voor Rechtsbijstand | www.rvr.org
Իրավական աջակցության խորհուրդ
VluchtelingenWerk Nederland | www.vluchtelingenwerk.nl
Նիդերլանդների փախստականների աջակցության կենտրոն

Ministerie van Veiligheid en Justitie, directie Migratiebeleid
www.rijksoverheid.nl

Հրապարակվել է Արդարադատության և անվտանգության նախարարության միգրացիայի վարչության հանձնարարությամբ:

Այս հրատարակման բովանդակությունը չի կարող ձեզ իրավունքներ վերապահել: Եթե թարգմանությունը առաջացնում է մեկնաբանությունների տարբերություններ, ապա գործում է հոլանդերեն տարբերակը: